

վատառողջ եսասիրության մը թունաւոր հրապոյրները: Եւ ինքն է որ կ'ըսէ, Եղիայի ձօնած *Տրտունջքին* մէջ, այն-քան յստակօրէն.

*Նւիրուի՛լ պետք էր ինծի. ու ես տեսայ այն առեն
Իմ վէրքերէս աւելի՛ խորունկ վէրքեր ու ցաւեր. –
...Կամբս նուաճուած իմ ցաւով՝ կազդուրեց ցաւն ուրիշին:
Ժողովուրդ մ'ես զգացի՛ որ լանջքիս տակ կը տրոփէր,
Աստուած մը, ա՛հ, եկած էր քառսիս մէջ բընակիլ,
Եւ խորն հնոցիս՝ որ դատարկ էր Սէրերէն եսապաշտ՝
Նետեց անմահ Գաղափարն, ոսկեփրփուր եռեփեց:*

Եւ բնութենապաշտ բանաստեղծին համար որ իրերէն մինչեւ մարդը եւ մարդէն մինչեւ իրերը միեւնոյն տիեզերական օրէնքները կը տեսնէ, ժողովուրդը բնութիւնն է, եւ այն ժողովուրդը որուն կ'ուզէ նուիրուիլ անշուշտ լուսագոյն բնութիւնն է իրեն համար, ընտրուած շրջանակը ուր բնութիւնն ամէնէն աւելի գեղեցիկ եւ օժտուած պէտք է ըլլայ: Եւ եթէ այսպէս ըմբռնուած, նուիրումը հարկ մըն է հասնելու համար ընդհանուր գաղափարներուն, բանաստեղծական ճշմարտին, անկարելի պիտի ըլլար աչքէ վրիպեցնել չարչարանքի ու գրկումներու բոլոր այն մեծ տեսարանները, որոնք ալ աւելի կը շեշտեն ժողովուրդին մէջ բնութիւնը իր բոլոր ներքին պոռթկումներով, լոյսին տենչը, ընդոծին իղձը ազատութեան: Եւ այսպէս՝ Վարուժան՝ հեթանոսական աւիւնէն կը հասնի մինչեւ ընկերվարութեան ամենանորր զգացումը: Բանաստեղծին հոգեկան բնաշրջումն է որ աստիճանաբար կը յայտնուի գրքին մէջ: Նախ Աւանդութիւնը, պատմական խոշոր գիծերը, արուած նիւթերը իրենց բոլոր պարեճահունչ հումութեան, նախնական հեթանոսութեան մէջ, զորս երեւակայութիւնը կը հազուեցնէ իր ամէնէն փողփողուն գոյներով, իբրեւ կեանքի գերագոյն շեշտումներ: Յետոյ անհատապէս յղացուած նիւթեր, ուղղակի զգայարանքներուն տակ ինկած պատկերներ, արեւով տաքցած անկիւններ, բացօդեայ ազատ կեանքին բոլոր անկախ,